

11. Սուրբէի Գրչի Սարաֆ Յովհաննիսեան, ազգային պատմութեան վերաբերեալ քանի մը ձեռագիրներ, գրուած 1760—1807, զորոնք ազնիւ բարեկամս Մեծ. Տր. Վ. Էֆ. Թորգոմեան տրամադրութեանս թողուց: Կը յայտնեմ իրեն խորին շնորհակալութիւնս: Նշանակուած է՝ «Սարգ. Դպ.»

Ասոնցմէ զատ անցողաբար գործածուած տպագրութիւնք, դիւանք եւն նշանակուած են իրենց տեղը:

Սարգիս Արքեպ. Սարաֆեանի կենսագրութիւնը մահուանէն ետեւ՝ 1789ին ոտանաւոր գրած է իր ձեռնասուն աշակերտն Յովհ. Վ. Նուրտինեան, որուն մի միակ սկզբնագիր օրինակը կը գտնուի ի Գիւ. Անտ., ինչպէս Նուրտինեանի ուրիշ գրութեանց եւ նամակաց գրուին համեմատութեամբ ստուգած եմ: Գործոյս սկիզբը դրած եմ զայս, ամենայն ճշդութեամբ, միայն տները թուագրած եմ:

Աշխատասիրութեանս մէջ պահած եմ սոյն բնագրին տասն Երգերու կամ Գլուխներու բաժանումը, պատմական կէտերն ամբողջ, լռելով անոր խորհրդածութիւններն ու դատողութիւնները: Անոր աւանդածներն ընդարձակած եմ ուրիշ աղբիւրներէ, եւ ժամանակակից հայ կաթողիկեայ եկեղեցական անձնաւորութեանց վրայ կենսագրական տեղեկութիւններ ըստ պատշաճի զետեղած եմ: Եթէ ասով պատմութեան ընթացքն երբեմն կ'ընդհատի՝ ուրիշ անձանց միջամտութեամբ, այն դիտմամբ եղած է: Ժա.